ԳԼՈՒԽ ՃԶԷ.

Որ ոք երկու այր և կամ կին բնականապէս բարկացեալ և 'ի վերայ միմեանց յարեալք ոչ ոք 'ի կողմ կալ մի՛ զոցի, բայց խաղաղութիւն քաղցրաբան խօսիւք։

ԳԼՈՒԽ ՃԶԸ.

Ամենայն ուստերս և դստերս հայոց ստանասցեն ժառանգութիւն նախնեաց իւրեանց, յետ քսան և մի ամաց հասակի իւրեանց։

ԳԼՈՒԽ ՃԶԹ.

Ամենայն ոք երիտասարդ և կամ այրի եթէ հաւանեցուցանիցէ կոյս դստեր միոյ տալով նմայ միայն դաստիարակ մի արժանոյ տան դրամ պղնձոյ և խառնակեսցէ ընդ նմայ, պարտաւոր լինի ամուսնասցի ընդ նմայ ըստ օրինօք։

ԳԼՈՒԽ ՃՂ.

Ամենայն դէն և զործիք պատերազմի մտցէ առ աշխարհն հայոց ազատ լիցի հարկից և մաքսից։

ԳԼՈՒԽ ՃՂԱ.

Աւազակ ոմն եթէ մէջ աւազակութեան իւրոյ գուցէ զոցի ջատագովութիւն և 'ի ձեռանէ